ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

01.11.22



Այսօրվա նիստում ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց

վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնել 0.5 տոկոսային կետով ՝ սահմանելով 10.5%

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող **լոմբարդային ռեպոյի** տոկոսադրույքը՝ **12.0%**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից **ներգրավվող միջոցների** տոկոսադրույքը՝ **9.0%**

2022թ. սեպտեմբերին 12-ամսյա գնաճն ավելացել է և կազմել 9.9%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս ավելացել է՝ կազմելով 10.5%:



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկ

Համաշխարհային տնտեսությունից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում են թույլ գնաճային ազդեցություններ

Համաշխարհային տնտեսությունում դիտարկվում են տնտեսական ակտիվության դանդաղման միտումներ: Զարգացած երկրների կենտրոնական բանկերը շարունակում են էականորեն խստացնել դրամավարկային պայմանները:

Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքի շարժընթացը զարգացած տնտեսություններում



Աղբյուրը՝ BIS, Երկրների կենտրոնական բանկեր

Սա արտահայտվում է միջազգային ապրանքահումքային շուկաներում գների որոշակի նվազմամբ, սակայն ընդհանուր գնաճը ՀՀ հիմնական գործընկեր երկրներում դեռևս պահպանվում է բարձր: Չնայած առաջարկի արժեշղթաների որոշակի վերականգնմանը, առանձին շուկաներում դրանց խաթարումների հետ կապված ռիսկերը պահպանվում են:

Գնաճը գործընկեր երկրներում



2022թ-ի երրորդ եռամսյակում ՀՀ տնտեսությունում բարձր ակտիվության միտումները պահպանվում են

Տնտեսական աճը գերազանցապես կրում է արտաքին պահանջարկի դրական ազդեցությունը՝ արտահայտվելով ծառայությունների ոլորտի էական ավելացմամբ: Պահանջարկի ընդլայնմանը նպաստում է միջազգային այցելուների և ՌԴ-ից դրամական փոխանցումների ներհոսքի շարունակական աճը:

Առաջարկի բաղադրիչներ տ/տ աճ (2022Q3)



Սա միաժամանակ արտահայտվում է ՀՀ արտաքին հաշվեկշռվածության դիրքի բարելավմամբ և դրամի փոխարժեքի արժևորմամբ: Բարձր պահանջարկը նպաստում է աշխատուժի շուկայի տաքացմանը, ընդհանուր գնաճային միջավայրի ընդլայնմանը և բարձր գնաճային սպասումների պահպանմանը

Մասնավոր հատվածի անվանական աշխատավարձ, տ/տ աճ, %



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկի գնահատական

Նման իրավիճակում կարևորվում է հարկաբյուջետային և դրամավարկային կոորդինացված զսպող քաղաքականության իրականացումը

Հարաբերականորեն խստացող դրամավարկային քաղաքականությունը և ՀՀ դրամի արժևորումը աստիճանաբար կնպաստեն պահանջարկի զսպմանը և գնաճային սպասումների նվազմանը:

Քաղաքականության և շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքները, %



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

ԿԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

... նպատակահարմար է գտնում բարձրացնել քաղաքականության տոկոսադրույքը

....հետևողական է լինելու համարժեք գործողություններով ապահովելու գնաճի կայունացում և չեզոքացնելու գնաճային սպասումների ապախարսխման ցանկացած ռիսկ:

Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի և միջնաժամկետ հորիզոնում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տոկոսադրույքի մակարդակի որոշման հիմքում ընկած մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ մինչև 2022թ. նոյեմբերի 15-ը հրապարակվելիք Մամուլի հաղորդագրությունում (Տոկոսադրույքի արձանագրություն)